ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 118-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով , հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկ.N 18112020-06-0037 հաստ. 20.08.2003թ.և Քարինջ գյուղի բնակիչ,լիազորված անձ Գագիկ Մանվելի Սարգսյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Քարինջ գյուղի կադաստրային քարտեզի 06-110-0016-0001-001 ծածկագրի 0,119.6քմ մակերեսով բնակելի տանը և 0,185 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք. գ.Քարինջ, Միտյա Մկրտումյան փողոց,թիվ 58 տուն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 119-Ա

<<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ>>-Ի ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-ն որոշման 7-րդ գլխի 147-րդ կետով՝

որոշում եմ.

1.<<Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ջրագծի վերակառուցման շինարարական աշխատանքներ>> 2020 թվականի սուբվենցիոն ծրագրով իրականացված աշխատանքների ավարտական ակտի ընդունման համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Զավարյան-համայնքի ղեկավար,

անդամներ՝ Երվանդ Շաքարյան-համայնքի ղեկավարի տեղակալ,

Բաղիշ Վանյան-Շամուտ բնակավայրի վարչական ղեկավար,

Վահրամ Ղարսայան- ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Վարուժան Մուրադյան-ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ,

Աշոտ Նալբանդյան-ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության առաջատար մասնագետ:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2020թ. նոյեմբերի 16-ի <<<<Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ջրագծի վերակառուցման շինարարական աշխատանքներ>>-ի ավարտական ակտի համար հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 114-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ